ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2024թ. **N _____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3–րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի, Ծ.Իսակովի պողոտայի հ.15/11 հասցեում գտնվող Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին կառուցապատման իրավունքով տրամադրված 16.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» հողերից փոխադրել «էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Ծ.Իսակովի պողոտայի հ.15/11 հասցեում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15052023-01-0299 վկայական) 16.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» հողերից փոխադրել «էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների» հողերի կատեգորիա:

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշանների համաձայն՝ 16.0քմ մակերեսով հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գոտում:

Քննարկվող հողամասը Երևանի քաղաքապետի 02.02.2023 թվականի հ.272-Ա որոշմամբ, կառուցապատման իրավունքով, մինչև 31.12.2045թ. ժամկետով տրամադրվել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին՝ Երևանյան լճի ափամերձ տարածքում արևային կայանի ենթակառուցվածք կառուցելու նպատակով: Արդյունքում գրանցվել է հիմնադրամի կառուցապատման իրավունքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18072023-01-0385 վկայական): Հիմնադրամը դիմել է հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու նպատակով, սակայն հայտը մերժվել է՝ վերոնշյալ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի լինելու հիմնավորմամբ և առաջարկվել է հողամասի նպատակային նշանակության փոփոխել Էներգետիկ ենթակառուցվածքների:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էներգետիկ ենթակառուցվածքների համար նախատեսված հողամասերը ընդգրկված են էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի կազմում, անհրաժեշտություն է առաջացել հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանեցնել օգտագործման նպատակին:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի հ.1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են

միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**